



ՄԱՐԿԵՏ

30 Փարայ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

30 Փարայ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական. — Խառն. — Ազգային
ուրեր. — Անկարգութիւնը յիշմիտ
ծին. — Թղթակցութիւնն ի կաւկասիոյ
— Իգական վարժարանի մը պէտքն յԱ.
րաբկիր. — Կարնոյ դործեր. — Սիւն.
եաց գաւառ. — Թերթօն Մանիսի, Հե.
տաքոտութիւնը մէկ քանի բուսոց և նո.
ցա ձայնի անուանց վրայ (Ս. Ուղու.
րիկեան). — Հանդիմանութիւն:

ՊԱՏԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ 23 ՆՈՅԵՄԲԵՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լուստա 2 դեկտ.
Բեդրասպուրկէն հետեւեալը կը հե.
ռագրեն առ Սթանտարտ.
Էլը հաւատարմէն թէ Պ. Տը Նովեբոֆ
բարձր պաշտօնի մը պիտի կոչուի ի
Բեդրասպուրկ. Պ. Կիրս Պէրլիի դեւ.
պան պիտի անուանի, Պ. Սապուրով
այ փարիզի:
Տէյլի Թէյէկրաֆ ալ հետեւեալ հե.
ռագրերը կը հրատարակէ Բեդրասպուր.
կէն:
«Ձրոյց կը պտըտի թէ Ինստիտիւթ
գործադրը պիտի հանուի իւր պաշտո.
նէն, և տեղը Պ. Գոհանքի պիտի դըր.
ուի»:

Պոմպայ 2 դեկտ.

Աֆղանստանի Ապտիւրահման Էմիր.
ը գիր մը տուաւ Անգլիոյ խոստանա.
լով որ առանց Անգլիոյ կառավարու.
թեան հաւանութիւնն ստանալու բան
մը չընէ, և Աֆղանստանայ գործոց վե.
ճակին վրայ միայն տեղեկութիւն տայ
անոր:

Այս խոստան մը վրայ, Անգլիոյ կա.
ռավարութիւնն ալ Գանտահարն Էմիր.
րին թողուց:

Շքոտա 2 դեկտ.

Քրիստիանի բնակչաց յուզմունքը կա.
ւենայ զինուորական նոր օրինաց դէմ.
Աւստրիոյ կառավարութիւնը զորք
կը գումարէ ի Բաթարոյ:

Սիէննա 2 դեկտ.

Թէ' աստ և թէ' ի Պէրլիի Սիւնի
զամի վաւային պաշտօնն ուղարկութիւն
գրաւած է, Բոլոր զլիւստոր լրագրերը
քաղաքական մեծ կարեւորութիւն կըն.
ծային այդ պաշտօնին, և այլ և այլ տե.
սակէտով կը վիճաբանին ազդր վրայ:

Այս — — — — — հասած հե. — — — — —

Վիէննա 2 դեկտ.

Բուսանիոյ խորհրդարանին բացման
առթիւ կարգադրուած արքունական ճա.
ռին Գանուրի վերաբերեալ մասն Ա.
ւստրիոյ դպած լինելով, Պուրբիէ
Աւստրիոյ — Լուսագրական զետեղման
հրաման եղաւ, որ Բուսանիոյ կառա.
վարութեան հետ ամեն անձնական յա.
րաբերութիւն դադարեցնէ և ընթացիկ
գործերը միայն տեսնէ մինչև ցնոր առ.
նօրէնութիւն:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

61 ՐԴ 807 ՈՒՄԾ

Լէվրիթ Հէրլոտ իւր երէկե թը.
ւով կը ծանուցանէ թէ, պաշտո.
նական ակմբոց մէջ նորէն լուր կայ
թէ Պէրլիի դաշնադրին 61 ՐԴ
յօդուածին գործադրութեան հա.
մար ի մօտոյ կայսերական Գումիներ
մը պիտի լրկուի Հայաստան, և ամե.
նէն աւելի հաւանական կը համար.
ուի որ Ղազի Ահմէտ Մուխթար
փաշան նշանակուի այս պաշտօնին:
Նոյն Անգլո-Պարսկ թերթը, ի
մեքագրական յօդուածի մը մէջ,
զոր կը թարգմանենք մեր վաղ.
ուան թիւով, կը հաստատէ թէ,
61 ՐԴ յօդուածին գործադրութեան
համար այժմ մեծ ուշադրութիւն

կը նուիրուի գաւառական կառա.
վարչաց ընտրութեան:

— Լէվրիթ Հէրլոտ կ'ըսէ թէ
Տիարպէրէն գրուած նամակներ
շատ ցաւալի նկարագրութիւն մը
կ'ընեն գործոց վիճակին վրայ Տե.
ղական վաճառականութիւնը դա.
դարման վիճակի մէջ է, գլխաւորա.
պէս ճանաչանքով անապահովու.
թեան պատճառաւ, և հանրային
գործերն ալ երեսի վրայ մնացած
են, կուսակալ իզգէթ փաշայի հըրա.
ժարմամբ, որ անկէ ի վեր գործի
չը խառնուիր:

— Թուրք լրագիրքը առանց
խորհրդածութեան կը թարգմա.
նեն Լէվրիթ Հէրլոտի լուրն, որ
Հայաստան Գումիներ մը լրկելու
գործին կը վերաբերի:

Կայսերական հրամանաւ

Երբեմն Պաշադիտի կառավարիչ
Հաճի Հիւսէյին փաշա՝ Երզնկայի
կառավարիչ անուանեցաւ, փոխա.
նակ Հաջիմ փաշայի, որ Կարնոյ
կեդրոնական Միւթէսարըքի առ.
ուանեցաւ:

Բուրք Պէտրիւս փաշայի որդի
Մուսթաֆա պէյ 2 միլիոնի կառա.
վարիչ անուանեցաւ:

Տիարպէրի ընդհանուր դա.
տախաղ Ահմէտ Շէյքի էֆէնտի
Սեբաստիոյ Մէքթուպի անուա.
նեցաւ:

Բ. կարգի Մէքիսիէ պատուա.
նըշան տրուեցաւ Գարեբերդի կու.
սակալ Բուրք Ապտուլլահ փաշա.
յին:

Կայսերական կանանցին վերա.
տեսուի Հաֆիզ Պէհրամ ճալային
Օսմանի ակնակալու պատուանը.
շան տրուեցաւ:

— Ռուսոյ-թուրք յանձնախումբ.
րին շաքաթ աւուր նստին մէջ, Պ.
Նովիբոֆ և Պ. Թէօրնէր առաջար.
կեցին որ Ռուսիոյ թողուած հա.
սոյթը նոյն վարչութեան ձեռամբ
մատակարարուին ու հաւաքուին,
որ արդէն պիտի հսկէ Եւրոպայի
արժեւորեցող թողուած հասոյթից
վրայ, որպէս զի ծախուց յաւե.
լում չլինի, միջոցեւ, եթէ Օսմ.
Պանքան հաւաքէր, նոր պաշտո.
նատարներ կարգելու և հետեւա.
բար նոր ծախուց տակ մտնելու
պէտք պիտի ունենար: Վազըթի
տեղեկութեանց համեմատ, գեւ. ո.
րոյում մը չէ տրուած:

— Վազըթ իւր շաքաթ աւուր
թիւով կը ծանուցանէ թէ փարիզի
մէջ Հանրագումար շինութեանց Օս.
մանեան Պանքա մը հիմնուել է,
ձեռնհաս սեղանաւորաց խմբի մը
գործակցութեամբ: Լոնտոնայի հըռ.
չակաւոր սեղանաւորական տունը՝
Տէնդ Բալմէր և Բնկ՝ որ 1854 ի,
1858 ի և 1871 ի Օսմ. փոխառու.
թիւններն հանած է, միացեր է
նոյն խմբին:

— Թուրք լրագիր մը կը ծա.
նուցանէ թէ Ռուսական դեսպա.
նատունն առաջարկել է Բ. Դրան
որ 2 Ռուս և 2 Թուրք Տրքթոր.
ներէ բաղկացեալ բժշկական խա.
ւըն յանձնախումբ մը լրկուի Ռե.
զէի գաւառակը, քննելու համար
թէ ինչ պատճառաւ վերջերս ծա.
գում առած էր այդ կողմեր ծա.
տախտ երեւան ենելուն զրոյցը:
Եւրոպական լրագրաց ոմանց մէջ,
տեղւոյ թիւրիմացութեամբ մը,
ծանուցուած էր անցեալները թէ

ժամտախտը զիտնոյ մօտերը՝ ծա.
գած է:

— Օսմանեան Պանքային վերջին
հրատարակութենէն կը տեղեկա.
նամք թէ հանուած 16 միլիոն ոսկ.
ւոյ թղթադրամին մինչև ցարդ ա.
ւելի քան 13 3/4 միլիոնը ընկած
է: Մնացած 2 1/4 միլիոն ոսկւոյ
անուանական արժէքն ունեցող
թղթադրամը՝ հատարակութեան
ձեռքը մնացած կամ փճացածներն
են, և յայտնի է թէ վերջին պա.
տերազմին ատեն Պուլկարիոյ մէջ
մեծ քանակութեամբ թղթադրամ
փճացաւ:

— Հանրածանօթ իւլիմա Ահմէտ
Թէվֆիզ, որ Անգլիացուց կրօնա.
կան գրքերը Տրքթոր Բէյ Մի.
սիոնարին գործակցութեամբ Թուր.
քերէնի թարգմանելուն համար է
Պոլսէն աքսորուած էր, Լոնտոնայի
մէջ մկրտուած է Գրիգորիանութիւն
ընդունած է, Անգլիայէն եկեղե.
ցոյն մասնակցելով, կը յիշուի թէ
Ահմէտ Թէվֆիզ էֆէնտի Յոյն ձըկ.
նորաց՝ օգնութեամբ փախած է
Քիոսէն, ուր կայսերական կառա.
վարութիւնն աքսորած էր զինք:

— Եգիպտական լրագիր մը կը
ծանուցանէ թէ Անգլիական կառա.
վարութիւնը քննութիւններ կա.
տարել կուտայ Սուէշի ջրանցքին
տկար կէտերուն նկատմամբ, և
կ'ուզէ իմանալ այն միջոցներ, որոց
մով կարելի է ջրանցքէն նաւերու
անցուղաբան ապահովել՝ եթէ ա.
նակնկալ յարձակում մը տեղի ու.
նենայ:

— Այս աւուր Թուրք լրագրաց
մէջ կը տեսնենք թէ Դ. կարգի Օս.
մանիէ պատուանշան տրուած է
մայրաքաղաքիս Էյ ճէվայիլ լրա.
գրոյն տնօրէն խմբագիր Ահմէտ
Յարիս էֆէնտիին:

— Փարիզէն իմաց կը տրուի թէ
Թուրքիոյ մէջ մեծ մտահոգութիւն
յառաւ բերել է Կ. Պոլսի հրատա.
րակեալ Արաբերէն լրագրոյ մը (Էյ
ճէվայիլ) մէկ յօդուածն, որ ըզ
թուրուցելու շրանացուց դէմ ա.
պըստամբելու յորդորելով, կ'աւե.
տէ անոց թէ Ալիբիկան Տրիպոլի
լրկուած Օսմանեան զորքերն ի
հարկին պիտի օգնեն ապստամբաց:
կը հասկցուի այժմ թէ Յրանսա.
կան դեսպանին կողմէ մօտերս առ.
Բ. Դուռն եղած դիտողութիւնն այս
կարգի հրատարակութեանց պատ.
ճառաւ էր:

— Հէյպէլի կղզւոյն մէջ Յունաց
աստուածաբանական վարժարանին
չէնքն հինգած լինելով, ի հիմանց
նորոգելու պիտի ձեռնարկուի:
Եւր. քն 5000 լիրա կը հաշուեն, որ
Պատրիարքարանէն կախում ունե.
ցող բարձրաստիճան եկեղեցակա.
նաց հանգանակութեամբ և այլ
կամաւոր նուիրատուութիւններով
պիտի հոգացուի:

Սոյն վարժարանէն ելած են
Յունաց ազգին բարձրաստիճան ե.
կեղեցականաց ամենամեծ մասն:

— Այս գիշեր Բերա Ռուսիոյ
դեսպանատան իրմացը վաճառա.
տուն մը գողեր մտնելով, 2-3000 ոսկ.
ւոյ արժողութեամբ վաճառք դը.
րամ և այլն վերցրին:

— Յունաստանի վերջին մարդա.
համարին նայելով, որ 1879 ի կա.
տարուած է և մօտերս արդիւնքն
հրատարակեցաւ, այդ թուականին
Յունաստանի բնակչաց թիւն էր

1,677,478 • 1870էն ի վեր, Երկրին
բնակչաց թիւն աւելցած է 221,576.
հօգել, Երկրը կրնայ քառապատիկ
բնակիչ ընդունել: Ամբողջ Յունաս.
տան 357,722 ընտանիքներէ բաղ.
կացեալ է, որք կը բնակին 335,159
տուներու մէջ: Յունաստանի բը.
նակչաց մէջ 277,759 ամուսնացեալ
արեւր և 276,704 կիներ կան: Ասկէ
զատ, 1879 ին Յունաստանի մէջ 250
հազար մարդիկ կային, որոց տա.
րիքն է 20էն 40: Այսպէս ուրեմն
հաշիւ կը լինի թէ այդ թուականին
Յունաստանի կարող էր 170,000 մար.
դոց բնակ մը հանել, իսկ այժմ
նոր ստացած գաւառներով, աւելի
քան 200,000 մարդ: Բոլոր Երկրին
մէջ կան 1690 փաստարան, 74
խմբագիր, 1280 բժշիկ, 47 դե.
ղագործ, 2194 վարժապետ և դա.
ստառ, 624 վարժուհի և 7652 ե.
կեղեցական: Արական սեռին մէջ,
կարգաւ գրել գիտցողներուն հա.
մեծամասնութիւնն է բնակչաց 100ին
314, իսկ իգական սեռին մէջ՝ 7
առ. 100:

— Ռուսիոյ գաղտնի ոստիկանու.
թեան գլուխ Չէրէվին զօրավարն
սպաննելու փորձին նկատմամբ Եւ.
րոպական վերջին լրագրաց մէջ
տեսնուած տեղեկութեանց նայե.
լով, նոյնմբեր. 13/25 ին երիտասարդ.
մը, որ ըստ երեւութիւն չըբայ կը
կարծուի, կնքեալ նամակ մը կը
ներկայէ ներքին գործոց նախա.
բարութեան ոստիկանութեան պաշ.
տօնատան, ուղղեալ առ զօրավար
Չէրէվին, որ այն պահուն յանձ.
նախմբի մը կը նախագահէր, յո.
րում աքսորի դատապարտուած
քաղաքական յանցանորաց պատի.
ժը թեթեւեցնելու վրայ կը խորհ.
ուէր: Մատուցեալ նամակին մէջ
կը յայտարարուէր թէ թղթաբերը
Պետական կարեւոր խնդրոյ մը նը.
կատմամբ առանձինն ըսելիք ունի
զօրավարին: Սահմանաւարտ՝ դուրս
կ'ելլէ: սենեակէն՝ մարդը տեսնելու
համար, որ զօրավարին իւր առջը
տեսածին պէս ըմբոյլէր մը կը
պարպէ, բայց գնտակն անոր ալ թե.
ւին տակէն անցնելով, մնաց չտար:
Զօրավարն իւր ձեռքով կը բռնէ ոճ.
րագործի, և զէնքը ձեռքէն առ.
նելով՝ ոստիկանութեան կը յանձնէ
զայն:

— Քուլմայի գաւառին (ի կեդ.
րոնական Արիւս) վերստին Չինաս.
տանի թողուելէն ի վեր, տեղա.
ցիք և նոյն ինքն Չինացի գաղթա.
կանք նախապատիւ կը համարին
Ռուսական խնչխանութեան ներքե.
մնալ ըստ առաջնոյն, և մեծ բազ.
մութեամբ սահմանագլխին Ռու.
սական կողմը կը գաղթեն:

— Պիլզնայի իշխանը վերջերս
հացիկներով մը մէջ ժխտեց այն
զրոյց թէ Պ. Կամպէթիթա իրեն հետ
տեսակցեր է ի վարձին:

— Շմալֆիւս անուն Գերմանացի
մը, հրդեհ մարեւոյ համար առ.
սակ մը հեղուկ հնարած է, որ ա.
մենաբուռն հրդեհները քան ման.
րեկրորդի մէջ կրնայ մարել: Այ.
դասի լրագիրը կը ծանուցանէ թէ
Քէյֆի կամիլին և երկաթուղւոյն
միջև մեծ փայտակոյտ մը կանգնե.
ւեր է յարդով և այլ գլուխաւոր
նիւթերով խառն, և կուպրով ու
քարիւղով (բէթրոյ) ուղղուելէ իւ.
տոյ՝ ահագին հրդեհ մը բռնկել է:
որոյ բոցերը տարօրէն բարձրու.
թեամբ կը ծառանային, և այդ նո.
բահնար հրդեհը վրան սրկուածին
պէս հրդեհ մարեր է ի հիացումն
տեսողաց:

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ծանոթ
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյն վերաբերեալ նամակ կա.
որ և ինչ գրութիւն խմբագիր—Տարբեր
սիւսի ուղղութիւն, Կ. Պոլսի Պաշտօն—Խառն
ձեւով պէյ խառն թիւ 51 Մատիսի դրա.
սենեակը:

Հանրա ծախքը վճար — Դ. Նամակ
չընդունուիր:

Զտպուած նամակ, յօդուած, ևս եւ
չեն տրուիր:



ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս որ ծանուցուած էր,
Ազգային Ժողովոյ դիւնաց ան.
դամները շաքաթ օրը Ղալաթիոյ
մատենադարանը գումարուեցան:
և Ս. Պատրիարք Հօր հրաժարման
խնդիրը մէջ դրուելով, միաձայ.
նութեամբ յայտարարեցին թէ
որդէն Ազգային Ժողովն անընդուն.
նելի դատած է զայն. բայց որով.
հետեւ Ս. Պատրիարքն այս անգամ
ուղղակի Բ. Դուռը դրկած է իւր
հրաժարական և Ազգ. Ժողովոյ դի.
ւանին ալ ծանուցած, հարկ է որ
Ազգ. Ժողովը գումարի:

Հետեւաբար՝ Ազգ. Ժողովը յա.
ռաջիկայ հինգշաբթի օրը պիտի
գումարի:

Մայրաքաղաքիս լրագրերը մանք
Ս. Պատրիարքին հրաժարման պատ.
ճառներուն վրայ այլ և այլ տեղե.
կութիւններ կը հրատարակեն: Մեր
իմացածին նայելով, այն տեղեկու.
թիւնը մեծ մասամբ սխալ են: Ն.
Սրբազնութեան հրաժարելուն բուն
պատճառները քիչ օրէն կրնան ի.
մացուիլ անշուշտ՝ երբոր պատճա.
ռաբանութեանց պատճենն հրատա.
րակութեան տրուի:

Բերկուրութեամբ կը լսեմք թէ
նախարարաց Ժողովոյն երէկի նըս.
տին մէջ որոշուել է, ի մէջ այլոց,
Հայոց Ազգային Հիւանդանոցին
կապուած հացի և մսի շնորհը շա.
րունակել ըստ առաջնոյն: Կայսե.
րական բարեխնամ կառավարու.
թեան իւր հաւատարմով Հայ հը.
պատակաց նկատմամբ ունեցած
հոգածութեան մէկ գովելի օրինա.
կըն է այս, որոյ նմանները կը յու.
սանք թէ հազուադէպ չպիտի լի.
նին այսուհետև:

Երէկ Միացեալ Ընկերութեանց
կեդր. Ժողովոյ գումարումը, որոյ
նպատակն էր Տնօրէն Ժողովոյ նոր
Ատենապետի մ'ընտրութիւնը կա.
տարել, չը կրցաւ տեղի ունենալ,
ատենը բանալու համար երեսփո.
խանաց օրինական թիւը չէ գոյա.
նաւորու: Ընկերութեան 80 երեսփո.
խաններն հազիւ 8ը ներկայ գըտ.
նուեցան(*), որք ժամ 6էն մինչեւ
9 ի դուր սպասելով իրենց բացա.
կայ ընկերաց, ցրուեցան, յառա.
ջիկայ կիրակէ նորէն գումարելու
որոշմամբ: Ուստի հրաժարեալ Տը.
նօրէն Ժողովը շաքաթ մ'ալ պիտի
չարունակէ իւր պաշտօն:

Կիւմիւշէրտանեան ագնիւ հա.
րազատք երէկ հացիկերով տուին
Հիւանդանոցի պատասպարեց:

Այս առթիւ Դեր. Տ. Յովհաննէս
Միկայել ասագ քահանայն հանդե.
սաւոր Ս. Պատրարք մատոյց Հի.
ւանդանոցի մատան մէջ, և սոյն
ազգային բարեգործական հաստա.
տութեան ամեն յարկերը պտըտե.
լով՝ պատասպարեալները մխթարեց:

(*)—Որք էին, նախագահն, հըրա.
ժարեալ Տնօրէն Ժողովոյ Ատենապետն,
Ուսումնապետն և Պանծապետն, նոյն
ընտրութիւն 2 երեսփոխանը, որոց էր
ծանուցեալ 16 ըրէկներն ստացող Տ. Կ.
Կիրճիկեան, և ուրիշ 2 երեսփոխանը:

(Carpenter)
